ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԳԱՅՔԱԳՐԱՆԱՒՃԱՐՈՒԹԻՒՆ

Գարձեալ տասնամեայ համար տարեշրջանը 5 Ֆր. կամ 2 րբլ. 50 կ. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսով համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. Հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 32

1894 ՆՈՅԵՄԲԵՐ 17

ՆՈՅԵՄԲԵՐ 5 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Ընդհրատարակութիւն. Աշբթ. օրեր

ԳՆԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհ. կաթողիկոսի կոնդակը Անգլիան Հայերի հոգեւոր Հովուին. — Նամակ Պարսկաստանէն (Սալմաստ). — Լուրեր Մուշէն եւ Սասունէն. — Հալածտահարուածներ ի Վան. — Կովկաս գաղթած թիւրքիացի Հայերի կեանքէն. — Հայեր ի Թիւրքիա. — Նուիրատուութիւններ Արմէնիոյ. — Թիւրքիոյ լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ. — Բանասիրական (Դիպի եգիպտոս)։

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՑԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԻՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՈՒՒՈՅԻ ՔՐԻՍՏՈՍԻ և անհատնելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, — Արժանապատիւ Սուքիաս վարդապետի Պարոնեան հոգեւոր Հովուի Հայոց ի Մանչէստր, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Գրական վաստակք Ձեր և տասնամեայ հովուութիւն հեռաբնակ հոգեւոր որդւոց մերոց ընդ այլովք բազմանութեամբք Ձերովք ղորոց լուեալ էր Մեր և ականատես իսկ եղաք, ի վաղուց անտի մխիթարչին զմեզ։ Զի դուք ոչ միայն վարժ ժառանգք կրթութեանց՝ զանձն ընծայեցուցանէք արժանաւոր դոլ Մերս Հայրական համակրութեան, այլև ի գործս հոգեւոր գործունէութեան գոլով Ձեր և յարարքն ակնյայտնի երեւեցուցանէք զհոգեւոր և զմտաւոր բազմավաստակ յատկութեանց Ձերոց զգեղեցիկ ապացոյցս։ Եւ տեսանեմք զի ի հեռաստանէ գոգցես առաւել իմն եռանդեամբ պաշտէք զՀայրենիս և զմեզնայն զՀայրենականս, գոհ առնելով զՀայրենասէր հայկազունս՝ ընդ զբազմաղան պէտս և կարիս փոքու հօտիդ պատուականի և իմաստնոյ։

Արդ կամելով մեր յայտնել զգոհունակութիւն սրտի Մերոյ աշխատասէր և բազմարդիւն հոգեւոր որդւոյդ Մերոյ սիրելւոյ, ի նշան համակրութեան Մերոյ արժան վարկաք այսու Հայրապետական կոնդակաւս շնորհել Ձեզ զվեց վարդապետական (1), զոր ընդ սմին առաքեմք կրել ի կուրծս Ձեր ի պարծանս գործունեայ և արդիւնաւոր երկոց և վաստակոց Ձերոց յասպարիզի գրականութեան և հովուութեան. յորդորելով զՁեզ այսու պարգեւատրութեամբ մերով նորաբոլբոք սիրով և անարատունջ անձնուիրութեամբ յարատեւել ի պաշտօնիդ ի բարեհամբաւ օրինակ եղբարցդ, յօգուտ Ձեզ յանձնեալ հօտի և ի մխիթարութիւն ամենայն բարեսիրաց և Մեր։

Եւ մեք օրհնելով բոլորով սրտիւ և Աստուածային առատաձիր օրհնութեամբ զՁեզ և զվոքր Հօտ Ձեր, հանապազորդեմք յաղօթս, զի և յայսմհետէ ամենայն յաջողութեամբ ընթանայցէք ի լոյս գիտութեան և աստուածպաշտութեան, և ի սիրտս հեռաբնակ հոգեւոր որդւոց Մերոց և զաւակաց նոցին վառ և բորբոք պահիցէք զնեռանդն և զսէր առ Առաքելական Ս. Եկեղեցիս Հայաստանեայց, առ Հայաստան ժողովուրդն, առ մայրենի լեզու հայկական և առ ամենայն ազգային նուիրական աւանդութիւնս մեր։

Ողջ լերուք և օրհնեալ յԵրկնաւորէ Հօրէ մերմէ և ի Մէնջ. Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի 27 յունիսի 1984

ՅԱրարատեան Մայր Աթոռ Էջմիածնի

ի Վաղարշապատ

(1) Որ հրատարակուած է արդէն Արմենիայի սեպտ. 7/19ի թուին մէջ։

ԽՄԲ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՊԻ ԵԳԻՊՏՈՍ

Ափրիկեան ծովեզերքը այս կողմեր յանկարծակի կը յայտնուի նաւով եկողներուն։ Ուրիշ ծովեզերքներ 30-40 մղոն հեռաւորութենէ իրենց լեռներով, բարձունքներով կիմացուցնեն նաւահանգստին մօտենալը. իսկ այստեղ նաւահանգիստը խոնուած նաւերն իրենց կայմերով կիմացուցնեն ցամաքին մօտեցած լինելը. երկիրը այնքան ցած դիրք ունի։

Ալեքսանդրիոյ նաւահանգիստը արուեստակէս պատսպարուած ընդարձակ կայան մ'է բազմազգի նաւերու։

Անցած տարի յունվարիառաւօտ մը ողջունելի Փարաւոնի երկիրը։ Մեր նոգենաւ Ալեքսանդրիոյ քարափին կը մօտենայ. շուտով 50-60 Ֆէլլահ արաբներ, սեւ ու ճերմակ դէմքերով, փաթթոց գլխին կամ փանթալոն հագած տեսակներէն, կիսամերկներալ քիչ չեն, արագ ոստումներով նոգենաւը կ'ելլեն և կը սկսին ճամբորդներուն պայուսակները խլելել. մեր ուղեկիցներ և իրենց բեռներ շատ քիչ են բազդատմամբ ասոնց թուին. բայց այդ հոգ չէ, երեքը կամ չորսը կսկսին կրել մէկի տանելիք բեռը, երկուքը պայուսակի ծայրերէն բռնելով, միւսներն ալ ձեռքերը բեռան դպուցած քալելով որ իրենք ալ աշխատած համարուին։

Լեզուի մասին օտար ուղեւորը ամենեւին դժուարութիւն չկրեր. եւրոպական, ասիական, ափրիկեան չատ մը լեզուներով կը խօսին, կամ աւելի ճիշտ, կը կոտրտեն այդ բեռնակիրները։ Ուղեւորը նախ անցագրատուն կառաջնորդուի. թեթեւ աչք մը կուտան իրեղէններուն, անցագիր կը հարցունեն. եթէ չունենայ, 5 Ֆրանգի մօտ տուգանք մը կառնեն և բաց կը թողուն։ Դուրս կելնենք մաքսատունէն և այս անգամ ալ հիւրանոցների ուղեցոյցներէն կը չրջապատուինք. մէկը արդէն կառքին մէջն է. ճամբուն վրայ երկուք ալ ինքնահրաւէր մեզ ընկերանալու պատիւը կառնեն և պարգեւի կրօսպասեն. չատ չանցնիր, յուսախաբութիւն կը սիրէ ամենին ալ. մենք ո՛չ Թուրիստ էինք և ո՛չ անգլիացի ճկնթլմէն ինչպէս կարծեր էին։ Այս առթով առաջուց յայտնենք որ այստեղ Արաբը Եւրոպացին եկող ամեն անձի վրայ այն աչքով կը նայի թէ փարաւոններին ուխտի եկած է. ուստի և վանքերի գիւղացիներին պէս պարգեւի կը սպասէ և կը պահանջէ ալ երբ ամենափոքր առիթ ներկայանայ։ Մուրացկանութեան այդ տեսակին մէջ երես կառնեն և կը քաջալերուին իսկ Անգլիացիներէ որոնք իրենց ձեռնայուն այցելութիւնների մէջ արծաթի դրամներ կը չուզացունեն Ֆէլլահի ձեռքը, անոնց արդէն փոչելից աչքերուն վրայ արծաթի փոչի մ'ալ կը քաշեն, ոսկին ապահովապէս երկրէն դուրս կրելու համար. իսկ Ֆէլլահը իր ընդունած ղուրուշներով կը մխիթարուի. հայրենիք ու քաղաքականութիւն խո՛ իր քսակի մէջ մի բան չեն աւելցուներ։

Տեղաւորուելէ յետոյ, փողոց կելնեմ Հայերի տեղերը գտնելու համար. սրճարան մը ցոյց կուտան և այնտեղ կը դիմեմ. բայց ի՞նչ տեսնեմ. Մարսէյլի Ուիւ Պօվօի սրճարանին պատկերը. երկու զոյգ պիլէթճիներ գաղթականի, անցորդի կը ապասեն և կը զարմանան որ ես իրենց չեմ հանդիպած։ Սրճարանի միւս յաճախորդներէն հայերէն բառ չլսեցի. Թրքերէն կը խօսէին։

Հայերի ուրիշ կեդրոն մը գտնել կարելի չեղաւ ինձ. մէկտեղը 3-4, միւսը 4-5 հայեր, առանձինն կապրին, իրարի կեանքէն տեղեկութիւն չունենալով։ Թիւրքիոյ զանազան քաղաքներէն հաւաքուած խառնուրդ մը կը կազմեն. մէկ քաղաքէ եղողներն ալ իրար հետ չատ յարաբերութիւն չունին. զբաղումները տեսակ տեսակ, դիրքով և նիւթական վիճակով իրարմէ չատ բաժնուած, մէկ ծայրը հասութառու պէյեր, միւս ծայրը աղքատներ, խոնարհ արհեստաւորներ. միջակ դասը չատ քիչ որ Ծուէ բաշկացած, անոնն անորոշ գաղթականութիւն մը. 20 օր մնալով հազիւ կրցայ այս ու այն անկիւն քաշուած Հայերէ բաւական անձեր տեսնել։ Մեծ թիւ մ'ալ չեն կազմեր. վերջին թաղական ընտրութեան ցանկին մէջ 140 չափահաս ընտրողներ նշանակուած են. կ'երեւի թէ մօտաւորապէս 400 հայ անձ կը գտնուի քաղաքին մէջ (ընտանիքներ քիչ են), ցրուած և աներեւութացած՝ օտար զօրեղ տարրերի մէջ, ինչպիսիքն են Արաբը, Յոյնը, Հրեան, Սիրիացին, Իտալացին և այլն։

Ինչ որ աւելի կը դժուարացունէ Հայերին իրար հետ յարաբերութիւնը, այդ է կիրակիի կամ հանգստեան օրի բացակայութիւնը. մահմետականը, հրեայն, քրիստոնեայն, ամենքն ալ մրցման մէջ, ո՛չ մէկ օր հանգիստ ունենալ կուզեն. Հրեայն Շաբաթ օրը կը մոռնայ երբ կը տեսնէ որ միւս կրօնք եղողները նոյն օրուան վաստակը իրմէ կը խլեն. նոյնը կանէ նաեւ մահմետականը իր ուրբաթի համար և քրիստոնեայն իր կիրակիին։ Հայոց եկեղեցին կիրակի օրերը թափուր կը մնայ. տարուան մէջ մի քանի մեծ տօներին միայն մեծ բազմութիւնով եկեղեցին կը հաւաքուին։

Քաղաքը 100,000 բնակիչ ունի. եւրոպական թաղերը արուարձանէն զատուած են. կրնայ երեւակայուիլ թէ մէկ կողմը աղտոտ, նեղ, ոլոր մոլոր փողոցներ, ցած չինութիւններ և խանութներ են, իսկ միւսը կողմը լայն, մաքուր, ընդարձակ փողոցներ, փառաւոր չէնքեր և վաճառանոցներ։ Այդ երկու մասերի մէջտեղը կը գտնուի Մէնչիէ կոչուած ընդարձակ ծառազարդ հրապարակը որի կեդրոնը Մէհմէտ Ալիի ձիաւոր արձանը կանգնած է և իր չրջակայ փառաւոր չէնքերը կարծես բարձրացած են իր մեծագործութեան վկայներ լինելու համար։ Հրապարակին մէկ կողմը սակարանն է, չէնքով և գործառնութիւններով հոյակապ. միւս կողմերը՝ մեծ վաճառատուններ և սրճարաններ ուր իրիկուան կողմերը անթիւ չամախորդներուն փէսերը և գլխարկները կը վխտան։ Այդ սրճարաններուն մէջ անգլիերէն, ֆրանսերէն, յունարէն, արաբերէն լրագիրներ կը գտնուին. միայն մէկին մէջ մի հայ թերթ տեսայ, այն ալ Ճերիտեի շարգիյի, այդ տեղ չամախող Թրքահաւս Հայերի համար բերուած։

(Շարունակելի)

ՃԱՆԻՐՈՒ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Սալմաստ, 10/22 Հոկտ. 94.

Կը փութամ Ձեզ հաղորդել մի նշանակելի իրողութիւն որ մի գաղափար կրնայ տալ այն բանի մասին թէ երեւակայութիւնը ի՛նչ դերեր կը կատարէ արեւելեան երկիրներին մէջ։

Ասկէ երկու շաբաթի չափ առաջ գատաւոր Առաջնորդական Գործակալ և Դէրիկի վանահայր Արժ. Տ. Աբսէն վ. Երէցեան տեղացի մի քանի քահանաներու և պատուաւոր աղգային-ներու ուղեկցութեամբ Դէրիկի վանքին այցելութեան կերթայ որ 2 ամսէ ի վեր անաւրական ձեացեր էր օսմանեան Համիտիէ հեծելախմբի յայտնի յարձակումէն ի վեր։ Վանահայրը վանքին մօտեցած ատեն, քիւրտ գողերը, մարդագայլերի խումբ մ'է որ յանկարծ վանքի դռներէն, ծակերէն դուրս թափելով կը սկսի քովի բլուրներն ապատանիլ և կրակ բնել մօտեցողներուն վրայ։ Հակառակ աւազակներու այդ կրակին, վանահայրը և ուղեկիցները վտանգին դիմադրաւելով, վանքը կը մտնեն և կը տեսնեն որ քիւրտերը իրենց պարկեշտ արհեստին հատատարիմ՝ այդ օր եկեր էին վանքին մէջ թողուած իրեղէնքը քեռ կապելու և իրենց հետ տանելու. չէին մոռցած մինչեւ իսկ դռները, փայտերը, սիւները, դերանները. մատուռի խաչկալն իսկ քանդեր էին և գուցէ աւելի առաջ կը տանէին իրենց գործ, եթէ վանահօր յանկարծ երեւիլն իրենց չպարտաւորեցնէր գործադուլի։

Աւազակներն ի վերջոյ կը ձգեն կը հեռանան. վանահայրը անմնացէ մին բռնել յաջողելով, կառնէ հետը կը վերադառնայ, վանքին մէջ թողուով 2.3 պահապանները միայն, մինչեւ որ պէտք եղած թուով մշակներ ղրկէր, վանքին ցրուեցողները որ երեսի վրայ մնացած էին, հնձելու։

Վերադարձին՝ վանահայրը իրողութիւնը կը հաղորդէ տեղական կառավարութեան և անկէ ալ մի քանի ձիաւոր կ'առնէ վանքը կուղարկէ, այնտեղիններուն ապահովութեանն օգնելու. քանուած աւազակն ալ վճհանձնութեամբ ազատ կը թողու, ուզելով դրացի քիւրտերուն ցուցնել որ ինք պատժելու հետ գիտէ և բարեկամութիւն անել։

Այստեղ կը սկսիմ գրել եղելութեան հետաքրքրական մասը և ցուցնել թէ ի՞նչպէս «կը գոռայ լեռն ահագին և կը ծնի մուկ ընչին»։

Վանահօր յիշեալ պարզ այցելութիւնն, ինչպէս կերեւի, վանի Պահրի փաշան լրտեսներուն աչքէն չվրիպելով, շուտով հաղորդուեր է Սուլթանին. բայց վանահօր ուղեկցող խմբի 10 թիւը մէկ կէրս վանէն և մէկ կէրս ալ Պօլսէն առնելով, Թէհրանի օսմ. դեսպանատան հաղորդուեր է այն ձեւով թէ հայ հազարաւոր փախստականներ Դէրիկ հաւաքուած են զարձեալ և օսմ. սահմաններուն անհանգստութիւն կուտան։

Թէհրանի դեսպանի դիմումը կեղծի չատ սակրողական եղած է որ վեհ. Շահի կառավարութիւնը վըրդովելով, նոյնպիսի ստիպողական և հեռագրական հրամանով Դաւրէժի փոխարքային կը հրահանգէ զօրք թափել Դէրիկի մօտ և հայ փախստականներուն բանակը ցրուելով, Սուլթանի սահմանները ապահովել հայերի յարձակումէն։ Դաւրէժի փոխարքան ալ առանց ժամանակ կորսնցնելու, զօրքերուն հրամանատարներէն մին, Ամիր Բէհադըր Ձէնկ, կը փութացունէ Խոյ որ այնտեղ Մակուի համար հաւաքուած զօրքն առնելով Դէրիկ հասնի։ Ամիր Ձէնկ՝ որ ինչպէս կերեւի յատուկ, այս ձեռնարկին ամենէն յարմար անձն էր, հրամանն ստանալը, Խոյ հասնիլը, պատրաստուած 400ի չափ ձիաւորները վեր առնել և դէպի Նպատակակէտը ճանբայ առնելը մէկ կանէ, առանց զօրքին, գնդապետներուն և ո՛չ իսկ Խոյի Նահանգապետին լսելց տալու իր չուկեսի մասին։ Զօրքին այսքան միայն կը հաղորդուի որ մօտակայ մի լեռ կերթան. հրամանատարը այնտեղ թէյ վայելելու է գնդապետներէն հետ։ Պարսից զունդը իրիկուն մեկնելով Խոյէն, գիշերն ամբողջ ձիավարելով առաւօտ կը հասնին Սալմաստի Հին-քաղաք աւանի Արաբական մնարբէթը (կայծերի մէջ յիշուածն է). այդտեղ գնդապետները կիմանան թէ Դէրիկ երթալու են. և Հայերը յանկարծակիի բերելու համար, հարկ ալ չհանուիր տեղական պաշտօնեայներէ ուղեցոյց ուղել, այլ պատահած մի Թուրք և մի հրէայ ճանբորդ առնելնին ձգած կարշաւեն դէպի Դէրիկ որ այնտեղէն 15.17 քիլօմէդր դեռ հեռի է։

Այսպէս, անցեալ երկուշաբթի առաւօտ, Դէրիկ մնացած վանքի վերակացուն և իր մօտ գտնուող երկու բանուորներն յանկարծ կըտեսնեն որ վանքի առջեւինեղ հովիտը ձիաւորներով կը ծածկուի. վանքը գտնուողներէն երեքը կասկածելով թէ օսմ. քրդերի արշաւանք մ'է դարձեալ, կաճապարեն քովի բլուրը փախչիլ որ դռնէ իրենց կեանքը թանգ ծախեն. բայց չուտով պատրանքը կը փարատուի։ Պարսիկ հրամանատարը աչքերը բաւական չրիեղէ և Դէրիկի համբաւուած բերդին, աշտարակներուն, հայկական բանակատեղի ոչ մի նշան չտեսնելով, նախազգացում մը կունենայ որ չարաչար խաբուեր է։ Այս իր խօսքն է, ինչպէս և հետեւեալները. «Վանքին մօտենալով, երբ հասկցայ որ խաբեբայութեան զոհ եղած ենք, գնդիս մարդիկը կեցուցի և չթողուցի որ անոնցմէ մին մեր եղնէ, վախնալով թէ իրենք աւազակաբարոյ (1) ընելով, կրնան աւարի փափագէ և յուսավրիպման ցաւէն մղուելով յարձակիլ նոյն իսկ անմեղ մշակներու վրայ և սպաննել զանոնք երբ կաչահաներ. ձեռքերնին ընկած ընչին աւարը մէկը միւսէն առած խլելու խնդիրն ալ կայ։ Գունդը անչարժ կեցուցնելով, գլխաւորները հետս առի և վանքը բարձրացայ. անդ գտնուողներէ մի քանին փախան, մնացող վերակացուին հետ ժամուռին ամեն կողմը քննեցի, սուրբերկրեայ մխերանոցները գտնելու յուսով. ոչինչ երեւցաւ և կը ցաւիմ որ մեր գալէն վանքին աշխատող պառաւ կինը վախցուցինք։ Տեսնելով որ լուսածները միայն երեւակայական են և վանքին մէջ կը մնան միայն մի քանի պահապան մշակ, փութացի վերադառնալ, վանքի պահապաններէն խլուած երկու հրացանն ալ մարդոցմէս առնելով իրենց վերադարձունելէ ետք։»

Այսպէս վերջ կառնէ Սուլթանի կառավարութեան մի խաղ որին և դժբաղդաբար ոչ կը լինի վեհ. Շահի կառավարութիւնն իր բարեմտութեամբ։

Հրամանատարը որ ինչպէս զօրքին սկիզբը ճարպիկ և արագաշարժ զօրավարի ընթացքն ունեցած էր և զօրքին մէջ ալ աղնուութիւնն ու խելացութիւնը յայտնի տեսնուեցաւ, կը փութայ հեռագրել փոխարքային իր արշաւանքի ելքը և ցուցնել թէ Հայերի մասին հաղորդուածները բոլորական զրպարտութիւններ են լոկ։ Ինքն իսկ վանքի վերակացուին ասած էր որ իր գալը լաւ եղաւ Հայերի համար և թէ վեհ. Շահի կառավարութիւնը չէ որ թշնամութիւն կուզէ անել Հայերին, այլ «Սուլթանն է Ձեր հակառակորդ։»

Ամիր Ձէնկ ժամ մ'առաջ խոյ վերադառնալ ստիպուած էր որ նոր զօրքերի համախմբման մասին իր տուած հրամանն ետ առնէ. նա առաջ կարծեր էր թէ իր ունեցած ձիաւորները քիչ կը լինէին Դէրիկի համար։

Բ.

ԼՈՒՐԵՐ ՄՈՒՇԵՆ ԵՒ ՍԱՍՈՒՆԷՆ

Մուշէն և Սասունէն յաւալի և ծանրակշիռ լուրեր կը հասնին. սոսկալի վայրենութեամբ հարստահարութիւններ կը գործադրուին, թէ՛ Քիւրտ «Համիտիէ» հեծելազօրաց և թէ՛ կառավարութեան ձեռքով։ Սասունն պաշարման մէջ է կանոնաւոր զօրքով և «Համիտիէ»ներով. բնակիչք անօթի են և յետին աստիճան թշուառութեան մատնուած։ Երզնկայի զօրաբաժնի հրամանատարը որ պաշարման խիստ ժամանակ Մուշ դնացած էր, կը լսուի որ Կ.պոլիս կանչուած է. հիմա կարծեն հասած է և դեռ հոն է. տեսնենք թէ ո՞ւր պիտի երթայ։ Կըլսուի որ անգլիական միջամտութիւն մը տեղի ունեցած է և երբ թէ այդ պատճառաւ պաշարումն մեղմանալ սկսած է։ Շատեր ձերբակալուած և Մշոյ մէջ բանտարկուած են։ Վանի անգլիական հիւպատոսն ալ անցեալներ այդ կողմեր գնացեր էր։ Մշոյ և Սասունի սահմանագլխին վրայ դտնուած 12 հայ գիւղեր կողոպտուած, այրուած և բնակչաց մէկ մաս սրէ անցուած են «Համիտիէ»ներու ձեռքով։ Կըլսուի թէ Ս. Կարապետի վանքն ալ կողոպտած և այրած են մասամբ և միաբանութիւնը փախած է։ Այս կսկծալի լուրերը տխուր տպաւորութիւն մը թողած են «Հայաստանցի» ժողովրդին վրայ։ Թշուառ ժողովուրդը չըգիտեր որ իր օրական ապրուստ մտածէ թէ իր անզէն և անօգնական եղբարց դառն և ազեկէզ վիճակը։

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ի ՎԱՆ

Վանէն մեզ կը հաղորդեն 18/30 Հոկտ. Թուով հետեւեալները։

Հարստահարութեանց թիւը և տեսակը օրէցօր կը շատնան. թիւրք կառավարութիւնը այլ եւս իբր մի պետական գաղանիք չուզեր պահել հայերն իրենց երկրէն գաղթեցնելու դիտումը։ Մինչեւ այսօր Հայերի գաղթականական շարժումները մի խլրտուք, գոնէ առերեսյթ իրարանցում կը ձգէին պաշտօնեաներին մէջ. իսկ այժմ ա՛լ։ Յայտնի մի ծրագիր է որ կը գործադրուի. ամեն կերպով աշխատել որ երկիրը պարպուի Հայերէ, միայն թէ այնպէս անել որ մերկ դուրս ելնեն սահմաններէն, շարժական ինչք չունենան հետերնին, իսկ անշարժն ալ անվաճառ երեսի վրայ մնայ, պետութենէն գրաւուելու համար։

Ահա Աղբակի գաղթականութեան պատկերը։ Աղբակցիք անցեալ 93ի հոկտեմբերէն ի վեր, այս մի տարուան մէջ 172 տուն գաղթեր էին, ընտանիքի անդամներէն կանայք ու տղայքը, 860 անձի չափ, միւս կողմ Սալմաստ փոխադրելով. իսկ իրենք, աշխատող տղամարդիկ, ժամանակի մը համար միայն Աղբակ վերադարձեր էին, նախորդ տարուայ ցանքերէն գոնէ մասամբ օգտուելու համար. միեւնոյն ժամանակ Մէհմէտ աւազակապետ՝ իրենց գաղթման պատճառն, երկրէն հեռացուելուն կը սպասէին որ գարձեալ տնով վերադառնան. սակայն Պահրի փաշան այս անգամ Աղբակի կողմ քննական պատգամ եւած լինելով, հրաման տուեր էր որ բոլոր գաղթողներուն անշարժ կալուածները գրաւուին յօրքունիս. այնպէս ալ եղաւ և մինչեւ իսկ այցելութեան և առեւտրի համար Սալմաստ գնացողներուն կալուածներն ալ գրաւուած են և վերադարձող Աղբակցիները բանտի և տուգանքի միջոցներով բանի Սալմաստ գաղթելիքը սըրբուին։ Պահրին ինք խօսած էր Քիւրտերին մի յանդիմանական ձեւով թէ «Նոքա (Հայերը) մեր պետութեան հողին չհանեցան և գաղթեցին. հիմա վերադարձան և դուք գեռ ոտք թօ. զած էք դանոնք։»

Հետեւեալ մանրամասնութիւնները աւելի չօշափելի մի գաղափար կուտան քիւրտական կառավարութեան մասին (այժմ քիւրտերն են որ կ'իշխեն)։

Շաքիր աւազակապետի նամնեակն Զընտի անունով մի քիւրտ խաբելութեամբ սպաննել կուտայ Պօղոսքէօնի մէջ։ Անգամ անուն կարճ հայ երիտասարդ մը որ յանդգնած էր անցեալ տարի իր չահատակութեանց դէմ բողոքել տալ դիւղացւոց և յաճախ կարգիլէր նոյա որ Զընտին կարեւորութիւն չընան, իր պէտքերը չըհայթայթեն և այդ կերպով իրենց

(1) Պարսիկները իրենց բանակի ձիաւորները լեռնային ցեղերէ կընտրեն։

Թշնամին չզղօրացնեն սառած օձի և գիւղացիի առակին պէս։ Ջընտին անցեալ ամսուն իւր մարդիկ կըխրկէ Պօղազքէսէնցւոց և մանաւորապէս Աբգարի տաւարները տանելու. Աբգար քանի մը կարճ ընկերներով անդէն անոնց ետեւէն կ'իյնայ, կողոպուտը ետ դարձնելու։ բայց Թշնամւոյն գնացակով չհասցած կ'իյնայ։

Տաղվէրան գիւղին մէջ երկու հայ երիտասարդներ ալ սպաննուեցան Քիւրտերէ։ Անցեալ ամսուն Քիւրտեր կը յարձակինանա Աղճավէրան և քանի մ'օրէ յետոյ Արտաւէդ գիւղերուն վրայ և քանի մը հրացան պարպելով՝ անդէն գիւղացին սարսափի մէջ կը թողուն և ոչխարները կը տանին։

Ամսոյս 13ին ալ Քիւրտեր արօտատեղիէն կողպանց գիւղի ոչխար զարկին տարին։ Անկէ 20 օր առաջ վարագի ոչխար միեւնոյն կերպով մաս մը տարին. և երբ պատր. փոխանորդ Սահակ վարդապետ կուսակալին կը սէ թէ «վարագայ վանքի ոչխար տարին», ի՞նչ պէտք է ընել, կը պատասխանէ թէ «Քանի որ Դանիէլ վարդապետ այն տեղի վանահայրն է, դուն շատ պիտի տանին։» Անկէ կը հասկցուի որ լինքն հրահանգ տուած է այդպիսի բաներ անելու։

Անցեալ ամսուն 12 Քիւրտեր աղ ծախող Ձեւանալով Պախէզիկ գիւղ կերթան, սակարկութիւն կընեն, հայ ձուազեղ կուտեն (այն ինչ այս գիւղային այնչափ աղքատ է որ ցամաք տարեկան հացով կ'ապրի) և երեկոյեան ժամ 12 ½ին կըսկսին գիւղացիներուն կողոպտել. անդէն գիւղացին սարսափահար կը թողու և կը փախչի, վայրագ Քիւրտերու ձեռք թողլով իւր ընտանիք և տուն. Քիւրտերը տունէ տուն շրջելով կսկսին արժեքաւոր նիւթերը վերցընել. քանի մը կնիկներ կըդիմադրեն բայց սաստիկ ծեծ կուտան և քիւրտերը ղէնքով կըսպառնան իրենց սպաննել եթէ անդամ մալդիմադրելու փորձ ընեն։ Եկեղեցական սուրբ անօթները և սպասներ որ երեսփոխանի տունն պահուած էին իբրեւ ապահով տեղ (զի եկեղեցին գիւղին ծայրը կը գտնուի և բնակութենէ անջատ), բոլորն ալ կը վերցընեն և եզան մը բառնալով կերթան և յաջորդ օր Ֆառուղ գիւղի տաւարնեերէն 50 հատ լաւ եզներ և կովեր կը գտանն ու կը տանին։ Այս ամէն կողոպուտներէն ետեւէն թէև հեծեալ ոստիկան զինուորներ խրկուեցան պաշտօնական ձեւի համար, սակայն ընդունայն ետ դարձան և բնական է. զի հրահանգուած են թէ՛ տանողները և թէ՛ ետեւէն գնացողները։

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍ ԳԱՂԹԱԾ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԷՆ

(ԵՐԿՈՒ ՔՍՏՄՆԵԼԻ ԴԷՊՔ)

Այսօր մեր քաղաքում երկու քստմնելի դէպք պատահեց, որոնք քաղաքիս բոլոր բնակիչների վրայ խիստ ծանր տպաւորութիւն գործեցին։

Առաջինն յայտնի է, թէ Թիւրքաց-Հայաստանի գաղթական հայերը քիւրդերի ու տաճիկների կողմից ինչպիսի նեղութիւններ կրելուց յետոյ — կորցնելով՝ որը իւր կոյս աղջկան կամ տղային, որը իւր հարսին, որը իւր մարդուն, որը իւր կնոջը, հազիւ հազ գցեցին իրենց առաջ երկիրը։ Բայց այստեղ էլ նրանց բաղդը միշտ իրենց հետ է։

Մեր գաղթական հայերն՝ այր թէ կին, տղայ թէ աղջիկ, մեր թէ ուրիշատարդ՝ բոլորը սկսել են մեր երկրում մուրացկանութեամբ պարապել, որով հազիւ հազ կարողանում են իրենց գոյութիւնը պահպանել մի կերպ։ Հայ կինը կամ աղջիկը՝ դէն գցած ամօթխածութեան քողը, ընկել է ոչ-նից տուն, լաւ ու վատ լսելով սրանից նրանից, կատր չոր հայ է մուրում... Մարդու սիրտը ճմլւում է, վիրաւորւում է, երբ տեսնում է մի գաղթական կնոջ, կամ տղայի ողորմութիւն խնդրելիս մի կինտոյից։

— Կըտամ, եղէ... ասում է կինտոն իրեն դիմող գաղթական կնոջը կամ աղջկան.

— Ի՞նչ «եղէ» կըսես օ՛ր... չըմ հասկնար, ագա՛ չան...։

— Ա՛յպէս...

— Վա՛յ լինէ... չ՛ըս ամչնար բոյիցդ...

Բայց առաջի անգամն է մեր գաղթական կինը կամ օրիորդը զարմանում, զայրանում, «վա՛յ լինէ» կոչում. նա մի քանի օրիկանների նոյնանման գաղանային առաջարկութիւններ լսելուց յետոյ, վերջապէս մեկին կամայ թէ ակամայ անձնատուր է լինում, խաբւում է և յաւիտեան կորստանում իրեն...

Աբձանադրենք բաղմաթիւ քստմնելի դէպքերից միայն երկուսը, որպէս դեռ նոր են կատարուել։

Քաղաքիս «Հայրատ. փաշա» կոչուած թաղում, իշխանութեան կարգադրութեամբ բնակւում են մի քանի գաղթական հայ ընտանիքներ։ Մի քանի օր սրանից առաջ յիշեալ թաղի թիւրքերը, թւով 200 հոգի, հաշուելով և մի պառաւ կնոջ՝ բոլորին ծեծում, ջարդում են, որի ոտն են կոտրում, որի գլուխը, որի մէջքը և այլն և այլն... հատատ, եկեղեցի, խաչ, աւետարան համարձակ հայհոյում, պատճառաբանելով որ իբր թէ այդ գաղթական պառաւ հայ կինը օրը ցերեկով մի թիւրքի ոսթարից մի երկու հրեք հատ գողացել է և տէրը այդ տեսել է։

Գաղան թիւրքերը չբաւականանալով իրենց ջարդով, խմբով գալիս են տեղիս վարչութեան և պահպանւում օրապահ պրիստաւին գաղթական հայերի վրայ, թէ բաւական չէ որ գաղթական հայերին տեղ ենք տուել մեր քաղաքում բնակուելու, դեռ սկսել են գողութիւն էլ անել, մեր ապարը գողանալ և մեզ էլ ծեծել, դին ու մասաբ հայհոյել... վերջապէս կամ մենք ռուսաց երկրում պիտի ձեանք կամ նրանք...

Եկան պահպանուելու և ջարդուած հայերը, գրկած բերելով վիրաւոր պառաւին։

Սակայն ոչ պակաս քստմնելի դէպքը ահա ո՛րն է։

Ա.յսօր առաւօտեան մի գաղթական հայ այրի կին իւր 8–9 տարեկան աղջկան, Թագուհի Եղիազարեան անունով, տալով երեք կոպէկ, ուղարկում է բազար մի գնելու։ Երեխան փողոցով գնալիս պատահում է մի յոյն սրիկայի, 20 տարեկան, որը անմեղ երեխային խաբում տանում է իւր բնակարանը, որտեղ իբր թէ աղքատ հայերին չորեր են բաժանում. երբ աղջիկը ներս է մտնում սենեակը, սրիկան ետեւից փակում է դուռը և իւր գազանային կրքերին զոհ դարձնում անմեղ որբիկին...

Խեղճ զոհի լացին կոծին և ճչին վրայ են հասնում մի ժանդարմ և մի ոստիկան, զոռով բաց են անում դուռը, և իսկոյն իսաց տալիս ոստիկանապետին և քննչին։

Սրտաճմլիկ տեսարան էր երբ անմեղ զոհի պառաւ մայրը փետելով իւր մազերը մի քանի անգամ ուշաթափուեց։

Սրիկան բանտարկուած է։

Վերջապէս ե՞րբ պէտք է յետ գաղթեցնեն այդ Թշուառ գաղթականներին։

Ա. Յովսէփեան։

Կարս 12 հոկտ.

(Նոր-Դար)

ՀՈՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Սիսի կաթողիկոս Ամեն. Տ. Մկրտիչ Սրբազան հեռագրեր է Կ.պոլսի պատրիարքարանին թէ իր առողջութիւն փոքրիշատէ լաւացած է և թէ իրեն ցեղապահ նշանակած է իր ձեռնասուն նորընծայ Տ. Խորէն վարդապետը որի պաշտօնի հաստատութեանը համար Բ.Դուռէն հրամանագիրը առնելով, Հալէպ իրեն ղրկուելը կըսպասուի է։

Պատրիարքարանը նկատի առնելով որ Տ. Խորէն մի նորընծայ վարդապետ է և կաթողիկոսական ցեղապահի պաշտօնին համար դեռ երիտասարդ մէկը, որոշեր է որ իր արդէն արած կարգադրութեան համաձայն, Գեր. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան երթայ Սիս։

— Պէօյիւքտէրէի Ս. Հոգիսմանոց եկեղեցւոյ նորոգութեանը համար 200 օսմ. ոսկի (4600 ֆր.) նուիրեր է Պօլսեցնակ մի Հայ որ իր անուն յայտնել չէ ուզած։

— «Ծաղիկ» չաբաթաթերթը որ դադարման դատապարտուած էր, վերստին հրատարակուելու թոյլտուութիւն ստացեր է Տպագրական տեսչութենէն։

ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ «ԱՐՄԷՆԻԱ»ԻՆ

Շնորհակալութեամբ կը հրատարակենք Արմենիային նպատակու համար մեզ հասած հետեւեալ նուիրատուութիւնները.

Թիւրքիահայ մի հայրենասէր հայ ընտանեաց 160 ֆրանգ, Ղօչանի (Պարսկաստան) հայոց ընկերութենէն 25 ֆր., Նիւ Եօրքէն Ա. Ս. 13 ֆր. և 50 մնթմ. և Յ. Ս. 5 ֆր. և 10 մնթմ.։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ.պոլսի ռուսական դեսպան Պր. Նէլիւոֆ հոկտ. 31/12 նոյ.ին Կ.պոլսէն մեկնած է դէպի Պետերբուրգ, Ջարի թաղման հանդիսին ներկայ գտնուելու համար։

— Բաղդէացիների Պատրիարք Տ. Իլիա մեռած լինելով, Մուսուլի մէջ ընտրական գործողութիւնները կատարուեր և պատրիարք ընտրուեր է Տիգրանակերտի արքեպիսկոպոս Տ. Ապտիշու որ մի քանի լեզուների հմուտ է և պատմական ու իմաստասիրական բազմաթիւ դրուածներ ունի։

— Պարսկական կառավարութիւնը «Առիւծի և Արեգակ»ի պատուանշանի երկրորդ աստիճանը նուիրեր է Վանի պահեստի զօրքերի հրամանատար Միրելիվա Մխիթիվա փաշային և հեռագրական ու թղթատարական անօրէն Հասան Թահսին էֆէնտիին. նոյն պատուանշանի չորրորդ աստիճանը՝ Վանի կուսակալութեան մասնաւոր քարտուղար Րէշիտ պէյին և Րէժիի անօրէն Սահակպէյեան վարդան էֆէնտիին։

— Վանէն կը գրեն Կ.պոլսի Թիւրք լրագիրներին թէ Ոստան գիւղաքաղքին մէջ Մէհմէտ Պաշա անուն 148 տարեկան մի մարդ կապրի որ դեռ քալառողջ է և օրական երեք-չորս օխա հաց կուտէ եղեր։

Ոստան արդէն քալառողջ օդ և դեղեցիկ դիրք ունեցող մի տեղ է Վանի ծովին եղերքը ուր մեծ մասամբ Քիւրտեր և Թիւրքեր կը բնակին այժմ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Կիլրաէն կը հեռագրեն նոյ. 15ին թէ Լիմասոլի մէջ ազէտալի հեղեղներ պատահեր են. 21 մարդ մեռեր է և հեղեղները բազմաթիւ կենդանիներ քշեր տարեր են։Նոյնպէս մեծ ջնաներ պատահեր են կղզիին ուրիշ կողմերը։

— Ալեքսանդր Գ. Ջարի թաղման հանդէսը վերջնականապէս որոշուած է կատարել առաջիկայ երկուշաբթի օր Նոյեմբերի 19ին։

— Քանի որ հանդուցեալ Ջարի մարմինը հասած է Պետերբուրգ, ամեն օր մեծ բազմութիւն կերթայ Ամենիմի պալատը, դագաղին առջեւէն կարգով անցնելով յարգանքի ողջոյնը մատուցանելու համար։ Հասարակ դասակարգի մարդիկ կընդունուին պալատը գիշերուան ժամ 10էն սկսելով մինչեւ առաւօտեան ժամ 8. իսկ բարձր դասակարգէ եղողները ցերեկները։

— Ձիւնական ազբիւրներէ եկած լուրերին նայելով, Ճափոնցիները դեռ յաջողած չեն լինիր Բօր-Արթիւրը գրաւելու։

— Մինչդեռ Ֆրանսա զբաղուած է Մատակասքարի խնդրով, Անգլիա ալ Մարոքի հետ մի խնդիր հանել

կուղէ. Ֆէսի մէջ Ալմանիայի Նիւմանի սպանուելուն առթով դոհացում կը պահանջէ և մի պատերազմնաւ կը ղրկէ Մարոքի ծովեզերքը։

ՐԱՒԻՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գերքերը կարելի է ըստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գերք չղկուիր։

Բ. Յ. Վարդանեանց. ԴԱՒԹԱՒՃԻԿ Գրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՅԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ ԿՐՏՈՒՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիայի անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիայի Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիան Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականների գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նթէ ընթերցողների հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ աղգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միածալ դերքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներըը երենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բբլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ռակն. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794. 1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գինն՝ ճանապարհածախսով՝ բբլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոդրեալ պատկերն ու գերքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիայի խմբագրութեան։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ Համառօտ կերպով քաղաքուած է թէ իւրաքանչիւր Հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն Հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ ատրածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմումի անել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկթագրի (գլխագիրը) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գերքերին վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՄԲԱՊՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՊԱ — ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարտեղութեան (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԴԸ ՅԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական տխուր և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներին թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և մեծ նոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ տարուան էջ մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ուղարկուել դիրքով 124 երեսներէ կը բազկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. Վրէժ (Պուլկարիոյ մէջ թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի. ջոցներ դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՅԶԱՐԻՈ (Ճունատանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւնները կը ներկայացունէ մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ճոյներն ի՛նչպիսի միջոցներ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշներ գանազան քաղաքներէ մէջ և գանազան տպաւորութիւնները տակիւրերեան գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՕՅՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՆԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներ պատճառ դարձած է և վերջ է վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.